ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 298

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, սպասարկման, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ
(ծածկագիր՝ 3.2- 18)

ա/ կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ/ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ/ հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ/ իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե/ իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.

զ/ բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է/ ապահովում է 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիների հողի հարկերը, ըստ գոտիների բնակվող գույքահարկի բազայում ընդգրկված բնակչությունից ապահովում է գույքահարկը, պարբերաբար ուսումնասիրում է հողի հարկի և գույքահարկի վերաբերյալ օրենսդրական փաստաթղթերը և ամենօրյա աշխատանքում ղեկավարվում դրանցով: Յուրաքանչյուր շաբաթվա վերջին օրը կատարում է փոխադարձ ստուգումներ հողի հարկի և գույքահարկի բազան համակարգող օպերատորի հետ, եռամսյակի վերջում ամփոփում է կատարած

աշխատանքները: Պահպանում է ներքին կանոնադրությունն ու կարգապահությունը ամենօրյա աշխատանքներում: Զբաղվում է տեղական տուրքերի գանձմամբ: Վարում է բազմաբնակարան բնակելի շենքերի վարձավճարների գանձման բազան:

ը/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ ունի առնվազն միջնակարգ կրթություն.

բ/ ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ նորմատիվ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներիցմեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի օգոստոսի 25-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 011-56-27-76):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ